

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-536-



# ԵԿԱՅՄԱՆ ՄԱՐՏԿԱՅԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ



ԹԵՏՐԱԿԱՆ

1932

ՅԵՐԵՎԱՆ

22 DEC 2017

691.396

Համապերի թելերն ամենից հարմար և ձեռընտու յե սնել սովորական ակումուլատորներից, բայց գավառում այդ միշտ հնարավոր չե և վոչ ել՝ ամենքին մատչելի:


Հոմապերի թելերը սնել անմիջապես լուսավորության ցանցից, յեթե այդպիսին կտ, նույնպես միշտ հնարավոր չի լինում, վորովհետեւ հաճախ ստացվում ե բավականին նշանավոր ֆոն, վոր խեղդում ե հաղորդումը, մանավանդ այն դեպքերում, յերբ ընդունում ենք հեռավոր կտմ սակավազոր կայաններից։ Ուստի ուղիութիրողները մեծ մասամբ ստիպված են լինում լամպերի թելերը սնելու համար դիմել գալվանական ելեմենտների ոգնության։

Գործնականում գոլություն ունեն մեծ թըզվով ամեն տիպի ելեմենտներ։ Նրանց մեծ մասը մի քանի թերություններ ունի, կամ այնքան ել մատչելի չի՝ իրեն բարդ կազմության պատճառով, քիմիական նյութերի թանգության պատ-




1-3388 գր

ճառով, կամ վերջիններս ճարելու հնարյագորություն չլինելու պատճառով և ալին: Այդ պատճառով ելեմնաների բոլոր տիպերից ռադիոգործում ամենից շատ տարածված են միայն լեկանշերի պարկավոր տիպի ելեմնաները (նկ. 1):



Նկ. 1.



Նկ. 2.

Այս ելեմնաները, համեմատաբար, պարզ կազմություն ունեն, եժան են, ընդհանրապես բավարար ելեկտրական հատկություն ունեն և մեծ խնամք չեն պահանջում:

ՊԱՐԿԱՎՈՐ ՏԻՊԻ ԵԼԵՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Վորպեսզի պատրաստենք մի այնպիսի երեմենտ, վոր մեզ բավարարի 2—3 լամպի թելեր մոտ 100 ժամ շիկացնելու համար, պետք է վերցնել մի ապակե բանկա, վոր ողու սովորական շիփի տարողություն ունենա: Ապա՝ 2—3 մմ հաստություն ունեցող թերթավոր ցինկից խնամքով կլորացնում են մի վոչ-լրիվ զլան (տես նկ. 2), վորի տրամագիծը պետք է լինի բանկաի տրամագիծը 2—3 ոմ պակաս, իսկ բարձրությունը՝ նույնպես բանկաի բարձրությունից քիչ պակաս պետք է լինի:

Ցինկին զոգում են պղնձի հաղորդիչ, վորը բանկայից դուրս են հանում դեպի վեր: Ցինկը ծառայում է վորպես ելեմնտի բացասական բևեռ (մինուս):

Իսկ վորպես դրական բևեռ (պլյուս) ծառայում է մի շերտաձև կամ ձողաձև գալվանական ածուխ, վորի շուրջը առանձին զանգվածից 1) մամլում են մի զլան, վոր կոչվում է ագլուերատ (աես նկ. 3):

1) Մանգանդիոքսիդից, կամ վոր նույն ե, մանգանպերոքսիդից ( $MnO_2$ ). սրա գործածելու նպատակն այն է, վոր սեհացիալի հետևանքով արաադրվող ջրածինը միանում է մանգանդիոքսիդի հետ և ելեմնան ազևս չի բեվեռանում: ծ. թ.

Ածուխն ու ազլոմերատը դնում են ցինկե  
գլանի մեջտեղը, ինչպես կարելի լե տեսնել նկ.  
1-ում. Կարեոր ե, վոր ցինկը նրանց չկպշի. Այս  
նպատակով, ազլոմերատի շուրջը կապում են մի  
քանի տպակե հուլունքներ, կամ պարաֆինով  
տոգորած փայտե ձողիկներ, վորոնք ծառայում  
են վարպես մեկուսիչներ:

Ածխի վերի ծալրին տօրացնում են  
պղնձե սեղմակ, վորին հետո միտցնում, կամ ուղ-  
ղակի զոդում են պղնձալար (հաղորդիչ):

Աղամերատի տրամագիծը մոտ 1,5—2 սմ  
պակտս պետք ե լինի ցինկե դլանի տրամա-  
գիծը, իսկ բարձրությունը կարող ե հավասար  
լինել ցինկի բարձրության:

Ազլոմերատի գլխավոր բաղադրիչ մտուը մի  
տռանձին նյութ ե, վոր կոչվում ե մանգանալե-  
րոքսիդ, վորի քանակից ու վորակից ե ամրող-  
ջապես կախված ելմենտի գործողության  
տևողությունը. Բայց վորագինեակ մանգանալե-  
րոքսիդն ելեկտրականության վատ հաղորդիչ ե,  
ուստի նրան խառնում են գրաֆիտ, կամ, ծալ-  
րանեղ զեպքում՝ կոկս, վոր ավելացնելով ելեկ-  
տրահաղորդությունը, պակսեցնում ե ելեմենտի  
ներքին դիմագրությունը, և, սրա շնորհիվ, ելե-  
մենտն ընդունակ ե դառնում ավելի մեծ հո-  
սանքի ուժ տալու:

Միջին հաշվով, կարելի լե վերցնել 2 կըշ-  
ռամաս մանգանալերոքսիդի փոշի և 1 կշռա-  
մաս արծաթագույն գրաֆիտի փոշի:

Բայց պետք ե նկատի առնել, վոր ման-  
գան պերոքսիդի քանակի տվելացնելուց ելե-  
մենտի գործողության տևողությունն ե ավելա-  
նում, իսկ գրաֆիտի կամ կոկսի քանակի ավե-  
լացնելուց և եծանում ե հոսանքի ուժը:

Մանգանի խառնուրդը թեթևակի սրսկում  
են նաշատիրի լուծությով, վորից հետո նրանից  
մամլում են ազլոմերատը:

Մամլելու համար փայտից պետք ե պատ-  
րաստել համապատասխան կաղապար, վորի հա-  
տակը պետք ե լինի պոկվող, ինչպես ցուց ե  
տրված նկ. 4-ում. Հատակում պետք ե փոս ա-  
նել ածխի ծալրի համար:

Մամլումն հետեւալ կերպ են կատարում.  
ածխի ծալրը հատակի փոսի մեջ զնելուց հե-  
տո մանգանի խառնուրդը մասմաս լցնում են  
սրա շուրջն ու տոփանում (տրամբում են)  
պակե կամ փայտե ձողով, մինչև վոր արդ լե-  
ղանակով լցնում են ամբողջ կաղապարը:

Մամլած ազլոմերատը կաղապարի միջից դուրս  
են հրում վորեւե փայտի ոգնությամբ, ապա  
փաթաթում են մի քիչ խօնավացրած քաթանի  
կտորով. Հետո՝ ազլոմերատի խտությունն ա-

վելացնելու նպատակով, քաթանի վրայից տմբն ուղղությամբ կտպկպում են թելով, ինչպես ցուց ե տրված նկ. Յում:




Նկ. 3.

Միջանցիկ քայով կամ վառարանի վոչ շատ տաք ջերմոցում (առօհք) չորացնելուց հետո, աղլոմերան արդեն կտրելի կլինի գործածել:

Ելեմենտը հափաքելուց հետո, այն պետք է լցնել նաշատիրի հագեցրած լուծութով: Սրա համար վերցնում են լեռորած, բայց դոլ (վոչ շատ տաք) ջուր և նրա մեջ լուծում են նաշատիրի

փոշին այնքան, վոր լուծութը հագենա և նաշատիրի նոր քանակություն այլ ևս չկարողանա լուծել իր մեջ: Մի շիշ ջրին գնում ե մոտ 200 գր. նաշատիր:

ՄԱՆՈՒՐԻ ԽԱՐԱՐՈՒԹ



ԱՇՈՒՐԻ


Նկ. 4.

Վորպեսզի բյուրեղացում տեղի չունենա, լավ կլինի՝ 1 շիշ լուծութին ավելացնել 1-2 հայի գդալ շաքար և 10-15 կտրմիլ աղաթթու: Ելեմենտն ունենում է մոտ 1,45 Վ լարում: Ցեթե նաշատիր չճարեք, ելեմենտը կտրելի լի

լցնել սովորական կերակրի տղի հագեցած լուծույթով, բայց այս դեպքում ելեմենտը կունենա միայն մոտ 1 v լարում:

### ՄԱՐՏԿՈՅԻ ՀԱՎԱՔԵԼԸ

Լամպերի թելերը սնելու համար, սովորաբար, լարում պահանջվում ե 4 վոլտից վոչ ավելի: Բայց վորովհետև նաշատիր պարունակող մի ելեմենտը տալիս ե միայն 1,45 v, վոր կարճատև ծառալությունից հետո ընկնում ե մինչ 1,25 վոլտի, ուստի շիկացման մարտկոց կազմելու համար պետք ե վերցնել ամենաքիչը 3 ելեմենտ, ու նրանց միացնել հաջորդաբար, այսինքն՝ առաջին ելեմենտի ցինկը պետք ե միացնել յերկրորդի ածխին, իսկ յերկրորդի ցինկը՝ յերրորդի ածխին (նկ. 5):



Նկ. 5.

Այս ձևով պատրաստած մարտկոցի լարումը հավասար կլինի բոլոր 3 ելեմենտների լարումների գումարին:

Յեթե ձեր մարտկոցը սնում ե 3—4 լամպ, և նկատեք, վոր նրա լարումն ընկնում ե, պետք ե նրան ավելացնել մի չորրորդ ելեմենտ ել լեթե պետք լինի, ավելացրեք հինգերորդն ել:

### Ի՞ՆՉՊԵՍ ՀՈԳ ՏԱՆԵԼ ՄԱՐՏԿՈՅԻՆ

Մարտկոցին հոգ տանելը կտյանում ե նրանում, վոր նաշատիրի թարմ լուծույթ ավելացնեք վրան, յերբ նկատեք, վոր լուծույթը գոլորշիացել ե:

Յեթե լուծույթն ակսի պղտորիել, նշանակում ե, վոր լուծույթում նաշատիրը պակաս ե. այդ դեպքում անմիջապես պետք ե ելեմենտների մեջ ածել այնքան նաշատիր, վոր լուծույթը թափանցիկ տեսք ընդունի: Վորպեսզի անօթի յեղերին աղ չըռնի, անօթների յեղերը պետք ե ոծել վազելինով կամ ճրազվով: Իսկ յեթե նըկատեք, վոր ցինկերի և ազլոմերատների վրա տեղի յե ունենում շատ ուժեղ բլուրեղացում, հարկավոր ե լուծույթի մի մասը հեռացնել և նրա փոխարեն լցնել նաշատիրի թարմ լուծույթ:

Յեթե նկատեք, վոր ցինկի և ազլոմերատի վրա չափաղանց շատ բյուրեղներ են նստել, պետք ե ելեմենտները քանդել, բոլոր մասերը խնամքով լվանալ տաք ջրով, վորին, լավ կլինի, խառնել չնչին քանակությունը վորւե թթու, որինակ, աղաթթու կամ քայախաթթու. տպա ելեմենտները նորից հավաքել:

Ածխի ծարին կամ պղնձի միացումների վրա ոքսիդներ հայտնվելու դեպքում, պետք ե նրանց խնամքով մաքրել, ապա ոծել վազելինով կամ ճրաղվով:

Ի.կ յեթե ալդ հանդամանքները չկան, լուծծութը պետք կլինի փոխել միայն այն դեպքում, յերբ ելեմենտները միանգամայն ուժասպառ լինեն (յերբ լիցրից դատարկվեն):

### ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՆՈՐՈՂԵԼԸ ՅԵՎ ՆՈՐԻՑ ԼՅՆԵԼԸ

Ժամանակի ընթացքում, ելեմենտների մեջ կատարվող քիմիական պրոցեսի չնորհիվ, ազլոմերատների մեջ գտնվող մանգան-պերոքուրին աստիճանաբար կրցնում ե իր թթվածինը, այսինքն՝ զբկվում ե թթվությունից, ջնաւած, վորդուք թարմ լուծութ եք ավելացնում, ելեմենտների լարումն արագ ընկնում ե, և նրանք շատ կարճատե են գործում:

Ելեմերտների եներգիան վերականգնելու համար, պետք ե նրանց մեջ դնել թարմ ազլոմերատներ, փոխել նրանց լուծութը, իսկ ցինկերը խնամքով պետք ե մաքրել նրանց վրա նստած բյուրեղներից:

Բայց, եկոնոմիստ անելու նպատակով. կտրելի յելեմենտների եներգիալի մասնավոր վերականգնում կատարել:

Այս նպատակով, ազլոմերատները պետք ե խնամքով թրչել տաք ջրով, վորին պետք ե խառնել քիչ քանակությամբ վորեւ թթու, տպա ազլոմերատները դնել միջանցիկ քամու մեջ, կամ չորացնել վոչ շատ տաք վառարանի ջերմում, վորի չնորհիվ նրանք մի վորոշ աստիճան հազենում են թթվածնով, այսինքն՝ թթվում են:

Վորպեսզի ելեմենտների եներգիան ել ավելի մեծ չափով վերականգնեք, պետք ե ազլոմերատներն զգուշությամբ քանդեք, մանգանի խտունուրդը նորից սղկեք (ծեծեք), վորեւ թթվի քիչ քանակություն պարունակող տաք ջրով լը-վանաք, բարակ շերտով փոեք տախտակի վրա ու դնեք միջանցիկ քամու մեջ, յերեմայերեմն վրան ջուր ցանեք ու խառնեք:

Այս միջոցով, մանգանպերոքսիդի բոլոր հատիկները լենթարկվում են թթվեցման, վորից հետո

20

առ մասւմ ե միտյն նորից մամլել տղոմերտու-  
ները, ինչպես վերևում ասացինք:

Ավելի լավ կլինի, լեթե հին խտոնութղին ա-  
վելացնեք վորոշ քանակությամբ թարմ մանգան-  
պերոքսիդ:

Վորոշ ժամանակ աշխատած մարտկոցի մաս-  
նակի լիցքը կարելի լե կատարել հեաելալ կերպ.  
ան միացնում են հար հոսանքի աղբյուրին,  
որինակ, լուսավորության ցանցին, լեթե վերջի-  
նիս մեջ հոսանքը հաստատուն ուղղություն  
ունի:

Միացում արագես են կատարում. ածուխը  
միացնում են լուսավորության ցանցի դրական  
լարին, իսկ ցինկը՝ բացասականին: Բայց չպետք  
ե մոռանալ, լարերից մեկում, անպայմանորեն,  
ներարկել (մոցնել շղթալի մեջ), վորպես ռեսո-  
տատ, շիկացման մի սովորական, որինակ, 16—25  
մոմանոց լամպ:

1—2 ժամ անցնելուց հետո մարտկոցը վորոշ  
չափով «լցվում ե» և այս պրեն կարելի լե  
գործածել:

Այս ձևով լցնելը կարելի լե կը կնել մի քանի  
անգամ, քանի զեռ նկարութիւն չեն ցինկի քար-  
քարում, կամ ուժեղ բնդրեղացրում:

ԳՐԱՎՈՐՈՒՄ

Սրբագրեց ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գլուխիտ № 7327, Պատվեր № 2999, Հրատ. № 2373, Տիրաժ 3000

Գետհրատի տպարան

Ցերեկան

Հանձնված և արտադրության 20/IX 1932 թ.

Ստորագրված և տպագրելու 9

Ար. Ֆ. Ե.

ՀՀ Ազգային գրադարան



NL0404566

3388

46